



Ի՞ՆՉ ԱՆԵԼ, ԵԹԵ ՁԵՁ ԲԱԽՏ Է ՎԻՃԱԿՎԵԼ ԴԱՌՆԱԼ ՄԱՐՏԱԿԱՆ ԱԹՍ-Ի ՕՊԵՐԱՏՈՐ (Խորհուրդներ երիտասարդ և անփորձ ԱԹՍ օպերատորներին)

1. ԱԹՍ-ների հետ մարտական փորձ չունե՞ք: Փնտրեք ինտերնետում (ուսումնասիրեք «ՊաՀԱԿ-ի գրադարան»-ում (t.me/PahakBooks) պարբերապար տեղադրվող նյութերը), գտեք ԱԹՍ-ների վերաբերյալ առկա բոլոր գրականությունը և կարդացեք: Գտեք ավելի փորձառու օպերատոր, նա ձեզ կբացատրի: Եթե ծույլ եք, կգոհվեք:

2. Հոգատար եղեք սարքավորման նկատմամբ: Այն ձեր աչքերն են ու հույսը: ԱԹՍ-ն կհայտնաբերի թշնամուն, կուղղորդի հրետանային կրակը, «նվեր» կմատուցի հակառակորդին և կհայտնաբերի վիրավորներին:

3. Հրամանատարին բացատրեք ձեր ԱԹՍ-ի հնարավորությունները (թոփչի հեռավորությունը, տևողությունը, օգտագործման պայմանները): Հակառակ դեպքում,

ստանալու էք այնպիսի բարդ առաջադրանքներ ,որոնք չէք կարողանալու լուծել, իր տխուր հոսանքներով հանդերձ:

4. Արդյունավետ նավիգացիայի համար անհրաժեշտ է երկու սմարթֆոն (ոչ անձնական): Մեկով վարում ենք թռիչքը, մյուսով՝ որոշում կոորդինատները (իդեալական լուծում է նաև պլանշետն առանց SIM քարտի): Հավաքածուի մեջ ցանկալի է ունենալ 5 մարտկոց, ամեն ազամ լիցքավորեք ԱԹՄ-ն նորով և պաշտպանեք ցրտից:

5. Կառավարման համար օգտագործվող սմարթֆոնը երբեք մի միացրեք ինտերնետին: Ծրագիրը ձայնագրում է բոլոր թռիչքների ամբողջական երթուղին և ուղարկում է հեռավոր սերվերներ:

Թռիչքին պատրաստվելիս պարզաբանեք խնդիրը, ընտրեք երթուղին և տեսողական կողմնորոշիչները (ճանապարհներ, բացատներ, լճեր, տների վառ տանիքներ, ծխնելույզներ և այլն), որպեսզի չկորչեք տարածության մեջ: Ստուգեք երթային լույսերի լուսաքողարկումը:

6. Օգնականի հետ ընտրեք ԱԹՄ-ի թռիչքի և վայրէջքի տարբեր վայրեր: Երբ սարքը միացված է, այն սկսում է հեռարձակել իր գտնվելու վայրը (ազդանշանի շառավիղը՝ մինչև 30 կմ): Նույն տեղից կատարելով թռիչքը և վայրէջքը՝ սպասեք հակառակորդի պատասխան արձագանքին:

7. Օգտագործիր սմարթֆոնի կոորդինատների փոփոխման (Fake GPS) ծրագիրը, որպեսզի թաքցնես քո գտնվելու վայրը Aeroscope ռադարներից: Մի միացրու ավտոմատ թռիչքի և վայրէջքի կոճակը, քանի որ դա «զրկում է» դրոնին երեսապատումից:

8. Թռիչքը (վայրէջքը) կատարեք «ձեռքից(ին)»: Պաշտպանեք օբյեկտիվը և շարժիչները փոշու և խոտի ազդեցությունից: Սարքը գործարկելուց առաջ համոզվեք, որ վերևում խոչընդոտներ չկան (ծառերի ճյուղեր, քիվեր): Անուշադրությունը ոչնչացրել է շատ ԱԹՄ-ներ:

9. Ձեր դիրքի առնչությամբ հակառակորդին մոլորեցնելու նպատակով թրախին մոտեցեք աղեղնաձև (ցանկալի է արևի կողմից):

10. Թռիչքի ընթացքում վերահսկեք մարտկոցի լիցքավորման աստիճանը: 30% լիցքավորման դեպքում՝ վերադարձեք:

11. Տեսագրությունն իրականացնել միայն հակառակորդի դիրքերի ուղղությամբ: Հակառակ դեպքում, հակառակորդի կողմից զավթված դրոնի հիշողության քարտով կբացահայտեք ձեր դիրքերը և «հանրաճանաչ» կդառնաք ամբողջ ինտերնետում:

12. Հակառակորդի ՌԷՊ-ի հզոր հակազդեցության պայմաններում, առանձին հմուտ օպերատորներ, պաշտպանված և սարքավորված դիրքերից, շրջակա տարածքը զննելու համար ԱԹՄ-ները գործարկում են ձկնորսական թելին կամ ՀՏՀՀ կառավարման լարին կապված:

13. Հակառակորդի դրոշմների հետ հանդիպումները քիչ հավանական են, բայց հնարավոր: Օդային մենամարտում հաղթում է նա, ով հայտնվում է վերին դիրքում և վնասում է ներքնինի պտուտակները:

14. Երբ մեկնում եք խնդիրը կատարելու, ձգտեք որպեսզի մեքենայում ամեն ինչ դասավորված լինի ըստ կարգի և հերթականության, խառնաշփոթությունն ու սարքավորումների ցրվածությունը կարող են կործանարար լինել կյանքերի համար: Երբ անհրաժեշտություն է առաջանում արագորեն տարհանվել մեքենայից, շատ մարտիկներ իրենց հանդերձանքով կառչում են ցրված սարքավորումներին և չեն հասցնում ժամանակին դուրս գալ:

15. Մի մոտեցեք հակառակորդի ընկած ԱԹՄ-ին, առավել ևս մի փորձեք ապամոնտաժել այն, հնարավոր է ականապատված լինել: Ուսումնասիրեք ինժեներական պատրաստվածությունը և զինամթերքը, որոնցով աշխատում եք, եթե ինչ-որ բանում վստահ չեք, դիմեք փորձառու մասնագետի օգնությանը:

Աղբյուրը՝ [t.me>super_Rembo](#)